


ք. Երևան

17.08.2020թ.


Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/18516-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.5/8011-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/10953-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության Ն/22.1/3173-2020 և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության Ն/14.1/2938-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/5509-2020 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/4109-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները, ինչպես նաև Վարչապետի 17.08.2020թ. թիվ 02/12.10/38659-2020 հանձնարարականը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Աղիտու բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 2.1841 հա վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 09-011-0107-0009) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան